



ԿԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ

ՄԲ ՁԱԳՔԱՆՍԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 70

10/23 ՆՈՅԵՄԲԵՐ 1912

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



Տ Պ Ա Ր Ա Ն

”ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ,,Ի

Ներկայ թիւէս սկսեալ Կաթողիկէ Արժագանգ շաբաթաթերթը լոյս պիտի տեսնէ իրեն սեփական տպարանին մէջ: Տպարանս, զոր բազում զոհողութեամբ կանգնեց Ամենապ. Հոգեւոր Տէր, ըստ բաւականի ճոխ է և օր աւուր միշտ պիտի կատարելագործուի: Արդէն ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար թէ՛ ի Կ. Պոլիս և թէ՛ գաւառներէ դիմողները գոհացնելու:

Կը տպուին ամէն տեսակ ծանուցումնք, գիրքեր, տետրներ, հրապարակումներ, քարտեր, քարտ-տետրներ, մանագրքներ ևն., ևն.:

Դիմելը անմրցելի կերպով աւանդ են:

Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմանէ ևս յաճախողները անտարակոյս գոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ «ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

Կ. Պոլիս, Բերա, 5 Պայրաւ փողոց 5



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐՔԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի ⑆ 10/23 Նոյմ. 1912 ⑆ Թիւ 70

ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Դ

ՈՒՂՂԱՓԱԹ ՀԱՒԱՏՔԸ

(Շար.)

Ճշմարիտ աստուածապաշտութեան, առաքինութեանց եւ գիտութեանց յորդառատ եւ ջինջ աղբիւր՝ Ուղղափառ Ս. Հաւատքը, որոյ հիմն է ինքն Քրիստոս, աւանդեցին մեզ Քրիստոսի Ս. Առաքեալները: Այս ճշմարիտ հաւատքը կը դաւանի Աստուածակառոյց եւ տիեզերահռչակ Կեփայեան Եկեղեցին, այս է՝ Հռոմէական Ս. Եկեղեցին, քսան դարերէ ի վեր. անարատ պահելով իրեն աւանդուած հաւատալեաց գանձը եւ եկեղեցական բարեկարգութիւնը եւ աւետարանական բարոյականը: Այս Ս. Հաւատքը Ս. Թովմաս եւ Ս. Բարթուղիմէոս Առաքեալներն քարոզեցին Հայաստանի մէջ. զայն իր արեամբ կնքեց մեր մեծ Հայրապետն Ս. Գրիգորիոս Լուսաւորիչ: Նոյն Ս. Հաւատքը անվթար շարունակեց միշտ մեր ազգին մէջ, թէեւ օտար եւ եկամուտ մոլորու-

թիւններ առ ժամանակ մի ազօտացուցին անոր շոյսը, եւ ոմանց ինքնահաւան յամսուութիւնը այս մոլորութիւնները յանդիմանացան յաւերժացնել, եւ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցւոյն դէմ անջատ եւ ինքնուրոյն ազգային եկեղեցի մը կանգնել, որ Հռոմայ եկեղեցիէն բաժնուած ըլլալովը, որթէն կտրուած ուռի մը պէս ցամաքեցաւ: Այս է ահաւասիկ Էջմիածնական անուանեալ Եկեղեցւոյն նշանակութիւնը: Սակայն ընդհանուր Քրիստոնէից Մայրն՝ Ս. Եկեղեցին Հռոմայ, որ միշտ մոլորեալները ի փարախն Քրիստոսի ածելու սրբազան պաշտօնն ունի, մայրական գթով հետապնդեց նաեւ Հայոց մէջ խաւարեալները լուսաւորելու՝ իրեն մասնաւոր առաքեալներովը, որոնք միջին դարէն սկսեալ ճշմարիտ ուղղափառ հաւատացեալներու պանծալի խումբ մը պատրաստեցին, որոնք ամենայն ճգամը եւ նոյն իսկ չարչարանօք եւ հալածանօք աշխատեցան իրենց ազգակիցները հրաւիրելու ի ծոց Մօր Եկեղեցւոյ: Եւ Աստուծոյ օգնութեամբ մեծապէս յաջողեցան այս նուիրական ձեռնարկին մէջ: Հարիւր հազարաւոր Կաթողիկէայք Հայոց մէջ փայլեցան իրենց անկեղծ յարումովն առ Ս. Եկեղեցին Հռոմայ: Պատմութիւնը յիշատակարան կոթող մըն է փառաւոր անցելոյն: Դարէ ի դար շարունակեց այս ընտրեալ գունդը իր առաքնութիւններով պայծառացնել հայ սերունդը: Սակայն թշնամին՝ ոխերիմ եւ անյագ, Հայ Ազգին մէջ դիւրաւ գտաւ այն տարրը, որ տկար էր եւ իրեն գործիք ըլլալու պատրաստակամ այսինքն Եկեղեցականաց դասը, որ ինչպէս ըսինք ազէտ ըլլալովն հանդերձ, յանդուգն եւ առիթ վնասող վրէժխնդրութեան ընդդէմ Հռոմէական Ս. Եկեղեցւոյ անասանելի վիժմն, որոյ դէմ իւր ծոցին մէջ անուցած ոխն ու ատելութիւնը առիթ կը վնասէր ծաւալելու եւ բնաջինջ ընելու ցմիշտ անոր ազգեցութիւնը, եւ եթէ հնար լինէր նոյն իսկ անոր անունը յԱրեւելս անյիշատակ թողուլ: Սակայն ողորմելիները էին յիշէր օրէնստուայց Գամաղիէի նշանաւոր խօսքերը (Գործք. Առաք. Ե. 30), եւ իրենց նպատակին հասնիլ կը ճգնէին որ եւ իցէ գնով: Ինչպէս Հրէայիս, որ երգունցած էին Քրիստոսի անունը աշխարհիս վրայէն անհետացնել, եւ մղեցին իրենց ատելութիւնը մինչեւ գժրիստոս ի Խնչ հանել, եւ հանազարեցան իբրեւ թէ յաղթանակի արժանացան. այսպէս այն մարտնչող մարմինը, այն զժոխային ոտխի Հայ գործիքները յիմարաբար յաղթութիւն կ'ակնկալէին. առանց անդրադառնալու թէ Քրիստոսի Խաչելութիւնը, ամենամեծ յաղթութեան զրօշակ պարզելն էր, եւ Հրէից պարտութիւն: Այն հինաւուրց Եկեղեցին, այն Հռոմէական Ս. Եկեղեցւոյ դաւանած Ս. Հաւատքը որ իբրեւ նախատող ալեաց անվեհեր կը հրէ Մարտիրոսաց Ս. արեան ովկիանոսին մէջ իւր յաղթական նաւակը, առ ոչինչ կը համարէր ոտխին յարուցած կամ յարուցանելիք մրդիկն ու անլեկոծութիւնը եւ զայն նախատելով հանդերձ առաւել մեծ եւ փառաւոր

յաղթութեան ժամանակ կը սլափափայտուէր Այսպէս եղած է Բրիտանիոյ թեան որրանէն սկսեալ մինչեւ մեր ժամանակները, եւ այսպէս պիտի շարունակէ մինչեւ աշխարհիս վերջը, եւ միշտ պիտի ստուգուի Տէր-տուղիանոսի այն նշանաւոր խօսքը որ կ'ըսէ «Արիւն մարտիրոսաց սերմն Բրիտանիայ»։ Ուղղափառ Ս. Հաւատքը իւր աստուածային զօրութեամբ սկսած էր ծաւալ գտնալ յարեւելս գաւառներու, քաղաքներու մէջ մոլորութեան մառախուղը փարատելով։ Մանաւանդ էջմիածնական Հայոց մէջ, ձգտում մը սկսած էր դէպ ի ուղղութիւն, զգալով իրենց վիճակին յոռի ընթացքը որ կ'առաջնորդէր անկէ ճամբու։ Փողովրդեան լուսամբիտ մասը, ինչպէս նաեւ եկեղեցականներէն ալ ոչ սակաւք, նա մանաւանդ Կ. Պոլսոյ պէս աշխարհաչափ ոստանի մը մէջ, չէր կրնար հանդուրժել իրենց եկեղեցականաց անորամարան վարդապետութեանց, եւ բիրտ բարուց, որ կը տիրէր առ հասարակ կղերականներու առանձին վարժունքներուն մէջ ինչպէս նաեւ յեկեղեցիս եկեղեցական արարողութեանց ժամանակ. անոնցմէ կը գանէին եւ նողկանք կը զգային եւ առիթ կը փնտռէին մեկուսանալու այն անախորժ վիճակէն եւ ազատելու իրենց գէթ արժանապատուութիւնը։ Հետեւաբար ընական էր որ իրենց յարումը ուղղէին այն կրօնքի որ իրենց ընականին շատ յարմար էր, հայ կաթողիկէ կրօնքին, որ նոյն ժամանակները թէեւ Կ. Պոլսոյ մէջ նորածին էր, սակայն աղբիւրը եւ արմատը յորդառատ եւ հաստատուն։ Հազար եօթ հարիւրին, ինչպէս արեւելքի շատ կողմերը, Ուղղափառ եւ Կաթողիկէ հաւատքը մուտքը ունեցած էր. Կ. Պոլսոյ մէջ նաեւ կար կաղնակերպութիւն մը խառն աշխարհական եւ նորահաստատ կրօնաւոր կղերական մարմնոյ, որ աշխարհականներու հետ զունդ մը կը կազմէր եւ զամ քան զգամ դէպ ի յառաջ կը մղուէր։ Ասոնք էին աշխարհականք երկսեռ, բարձր, միջակ եւ հասարակ դասակարգէ, իսկ կղերականք սակաւաթիւ աշխարհական եկեղեցականներէ զատ, նմանապէս կրօնաւոր սակաւաթիւ վարդապետք էին որ հոչակաւոր Միթարայ Աբրահօր գաւառներն էին, եւ նոյն թակ ինքն Միթար Աբրահայրն ներկայ էր Կ. Պոլսոյ մէջ եւ ամբապնդելու ջանահնար կը լինէր իւր կրօնքը, որ ապագայ դարերու մէջ պանծալի ճիւղերովը Հայ Ազգին փրկիչը պիտի ըլլար։ Այս Կաթողիկէ փոքրիկ եւ սահմանափակ հասարակութիւնը որ թէեւ Տաճկաստանի մէջ տակաւին պաշտօնապէս ճանչցուած չէր, Հոռոմէական ազդեցութեամբ արեւելեան տիեզերքի վրայ իւր ճառագայթները ափռելու եւ լուսաւորելու սկսած էր լուսնոյ պէս որ իւր լոյսը կը ստանայ արեգակէն եւ մեղմօրէն ու վեհերոտ կը հալածէ խաւարը։

(Շարունակելի)

ՕՐՄԱՆԵԱՆԻ "ՉԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ" ԳԻՐՔԸ (*)

Բ.

(Շար.)

Այսու հանդերձ իրաւ է թէ կրօնական խնդիրը չէ դադրած կենսական խնդիր մը ըլլալէ բոլոր Արեւելի քրիստոնեայ հասարակութեանց մէջ, բայց տգիտութիւնը եւ անմշակ աւանդականութիւնը ոչ-կաթողիկէից մէջ կրօնքը կամ աւելորդապաշտութեան կամ ազգամոլութեան մղած է, որ երկուքին հետեւանք եղած էին բռնաւոր եղբայրահալած ոճիրներ։ Սխալ է հետեւաբար թէ «կրօնի նշանակութիւնը մեծ մնացած ըլլայ անոնց համար»... Նորեկ զարգացեալներն իրենց ազգային զարգացումի միակ արգելքը կը նկատեն կրօնքը եւ զայն կ'ոտնակոխեն այսօր։ Անկրօնութեան այդ շարժումին կ'ակնարկուի անշուշտ երբ կ'ըսէ «թէ ներկայ սերունդները չեն ուզեր այլեւս կղերէն առաջնորդութիւնը ինչպէս առաջի ասեմները»։ Ինչո՞ւ համար կը քողարկուի այսպէս անկրօնութիւնը, անշուշտ քիչ առաջ ըսածը բացէն չջրելու համար... Արդիապաշտից ոճն է այս՝ հակասել առանց հակասող երեւոյթու... Բայց հոս կ'իյնայ շատաչող հակասութեան մը մէջ՝ երբ մոռնալով վերը ըսածներն նախնական եկեղեցւոյ ժողովրդական վարչութեամբ կառավարելու մասին՝ հոս կը ճանչնայ թէ առաջին ասեմները կղերէ կը կառավարուէր։ Արդիականութեան մէկ երազն է՝ կղերի տեղ զփոխովորդը քահանայացին, եւ այդ շարժումն ալ կը յիշատակուի՝ երբ կ'ըսէ թէ կղերէ առաջնորդութիւնը չուզելով մէկտեղ «ո՛չ ոք կը մտածէ խզել այն կապը զոր Ազգը հաստատած է Եկեղեցւոյ հետ»։ — Ուրեմն Եկեղեցւոյ ու ժողովրդեան մէջ եղած կապին իսկ հեղինակը Ազգն է. ուրեմն մարդկային է այդ Եկեղեցին եւ Աստուած հոն գործ չունի։ Հրէից մեսիականութեան աշխարհային թագաւորութեան ու տիեզերականութեան սպասելուն պէս Հայն ալ ուրեմն զԵկեղեցին նիւթական ու շահախնդիր աշխարհասիրութեան հոգւով պահած է։ Հայուն առ իւր Եկեղեցին վերաբերման այս իմաստը տալու համար է անշուշտ որ անորակելի պաղարիւնութեամբ կ'աւելցուի հետեւեալ նախադասութիւնը. «Հայը երբ հաւատալի ալ դադրի, հաւատացեալ մը ըլլալի չի դադրիր»։ մեծ իմաստ, մեծ խօսք... որ անհաւատ հաւատացեալի հրէշ մը կարելի կ'ենթադրէ։ «Նա ներքնապէս կը զգայ, որ երբ իւր Եկեղեցւոյ նշանակութիւնը վերցուի, բոլոր իւր զգացումներուն շեմքը կը կործանի»։ — Հաւատալէ դադրելէն վերջ չենք գիտեր ի՞նչ զգացմանց չէնք կրնայ մնալ տակաւին կործանելի... զգացումէ աւելի ըսելու էր թէ

(*) Տես թիւ 67, էջ 643։

տիրող օրինաւոր կառավարութեան աչքին տակ՝ ազգային վարչութիւն մը պահելու եւ ղայն օր մը կառավարութեան վերածելու ցնորքն կը ցնդի :

Բայց կրնա՞ր եկեղեցի մը այս վախճանին ծառայել առանց ինչալու կորստեան վտանգի մէջ . հոգ չէ թէ կորսուէր, նա որոշուած էր Արեւելքի մէջ աշխարհականացման նոխադն ըլլալ . «Առաջին անգամ հրասարակուած 1839 տարւոյ Հաթթը Շերիֆէն ետք, որ քրիստոնեաներու ազատագրութեան հիմնական օրէնքը եւ պետութեան աշխարհականացման նախափայլը եղաւ, Հայերուն առաջին մտածումը եղաւ, նոր Եւրոպիոյ գաղափարներէն եւ կերպերէն ինչ ինչ իրենց սեփականել» . պիտի բաղձայինք հոս բացատրուած տեսնել թէ ի՞նչպէս Հաթթը Շերիֆը աշխարհականացման նախաքայլ մը եղաւ, թանկագին խոստովանութիւններ մը ընել հարկ պիտի ըլլար քրիստոնէից ազատագրութենէն մինչեւ պետութեան աշխարհականացումը ուստի եւ համար : Այդ երկու հեռաւոր ծայրերն իրարու մօտեցնելու համար կարեւոր էին Նոր Եւրոպիոյ այսինքն հակակղերական, անկրօն, մասնական Եւրոպիոյ գաղափարներն ու կերպերն, որոնց ներմուծման ու գործադրութեան ազդեցութիւնը, մենք գիտենք, թէ որքան տառապանքի ու տագնապի պատճառ եղաւ Հայ Կաթողիկէ հասարակութեան ալ : Նոր Եւրոպիոյ գաղափարներն ու կերպերն կը պահանջէին 1) աշխարհական տարրի միջամտութեան ընդարձակումը հետեւաբար պատրիարքի իշխանութեան նուազումը . 2) Աշխարհական հակակշիռ մը, որ արգիլէր «եկեղեցականաց գերակշռութիւնը քաղաքական տեղանակի մէջ» . 3) հոգեւորական վարչութեան ալ սեղմում մը աշխարհական ազդեցութեան տակ զրուսուող եկեղեցականներու ժողովի մը հսկողութեամբ . 4) վերջապէս ազգային Սահմանադրութեան կազմութիւնը ու հաստատութիւնը «որուն հիմնական ուղղութիւնն էր ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը» : Ահա յաջողութիւն մը Նոր Եւրոպիոյ գաղափարներու ու կերպերու, որ առ երեւոյթս միայն Հայ ազգին մտանաւոր շահերը կը կարգաւորէր, բայց միանգամայն նշանաւոր յեղափոխութիւն մը կը գործէր Արեւելքի սովորութեանց մէջ» : Ուրեմն ասով Արեւելքի եւ Հայուն եկեղեցւոյն ի մասնաւորի սովորութիւնները նշանաւոր յեղափոխութիւն մը կրած են, ուրեմն Նոր Եւրոպիոյ գաղափարներն ու կերպերն էին, որ Հայը իւր աւանդական հետեւողութեամբ սեփականած էր . ուրեմն հայ եկեղեցւոյ նախկին սովորութիւնները չէին որ այս յեղաշրջման կը մղէին : Ասոնք են Պր . Bareillesի խորհրդածութեանց բնական հետեւանքը եւ իմաստը . այսու հանդերձ ինքն համարձակ հակասութեամբ մը կը յանդիմանի ըսելու թէ Հայերը «Ասով վերադարձած կ'ըլլային իրենց եկեղեցւոյն կազմակերպական ոգւոյն» Աշխարհականացման գաղափարի

նորութիւնը չուրանալով մէկտեղ զայն հնաւանդ Եկեղեցւոյ սեփականութիւն ցուցնելու ճիգը բնականաբար այդ հակասութեանց մէջ պիտի ձգէ գրողը։ Սակայն հակասութիւնը մեզ չէ փոյթ, երեւան կը հանենք զայն գրողին արժէքը եւ անոր ջատագովութեան վարկը պարզամիտ ընթերցողաց ծանօթացնելու համար։ մեզ կարեւոր է սակայն հասկնալ թէ հայ էջմիածնականաց Սահմանադրութիւնը ստեղծող Նոր Եւրոպոյ՝ Արեւելքի սովորութիւններն յեղաշրջող նոյն գաղափարներն ու կերպերն՝ որ Երիտասարդ-Թուրքերու ծրագրի սկզբունքներն ու գործողութեանց հիմնադէտն կը կազմեն։ Այս մենք չէ որ կ'ըսենք, այլ միշտ Պր. Bareillesն է։ Նա հայ էջմիածնականաց սահմանադրականութեան ծայրայեղ ջատագովութիւն մը ընելով՝ անգամ մ'ալ ցուցնելէ յետոյ թէ հայ Եկեղեցւոյ մանաւանդ գաւառներու մէջ ներքին կայսութեան անտեղեակ է, կ'ուզէ կամուրջ մը ընել զայն դէպի ազատական կառավարութիւն երիտասարդ թուրք կուսակցութեան, որովհետեւ այս կուսակցութեան ձեռքով եղած զարգացման նուիրագործումին «կը դիմէին Հայերը իրենց բնական ձգտումներով»։ Այդ ձգտումները սակայն եւ զարգացման նուիրագործումը Երիտասարդ-Թուրքաց կարծել տուաւ «թեւսեմը հատած երկրօնական հասարակութեանց առանձնացումները ջնջել, իբրեւ աւելորդ բաներ։ Նա մտածեց թէ նոր վարչութեան պատշաճ երկր պայմաններ յարմարցնել»։ 1839ի Հաթիթ Եփրեփի դէպի աշխարհականացում առաջին քայլը որ Հայոց Եկեղեցիին վրայէն կամուրջ մը նետած էր 1860ի ազգային սահմանադրութեամբ, Երիտասարդ-Թուրքերու վճռական կրօնաշինջ ծրագրին կը յանգէր։ Եւ «Հայերը հեռու չեն այդ ծրագրի տեսութիւններուն համաձայնելէ (էջ 16)։ Անոնք ամենեւին մասնաւորութեանց գաղափարներ չունին, եւ երբեք կամք չունին համեմատութեան գործին արգելներ յարուցանել։ Ո՞րն է այդ արդիւքը, զոր վերջնելու պատրաստ է Հայը։ ԿՐԾՆԻԸ, որ խտրութիւն կը դնէ ցեղի եւ ցեղի մէջ, հասարակութեան ու հասարակութեան մէջ... Այդ խտրութիւնը «խորհրդարանական վարչութեան հիմնական կէտերու հետ համաձայն չէ եւ որչափ այդ հակառակութիւնը կը մնայ, օրէնսդիր իշխանութիւնը ազգային կամքին վրայ հաստատած չի կրնար ըսուիլ. եւ թէ պէտք է որ միութեան գործը հաւասարութեան վրայ հիմնուած ըլլայ»։ Բայց կրօնքի ջնջումը որքան ալ քրիստոնէից կողմանէ դժուարութիւն չունի, կայ մեծ արգելքը... Սահմանականութիւնը, որ տէրութեան պաշտօնական կրօնքն է... Ի՞նչ ընելու է հոս. «Քրիստոնեաները՝ կ'ըսէ, կը սպասեն որ կառավարութիւնը նոր ճիգ մըն ալ ընէ եւ յեղափոխութիւնը մինչեւ իւր վերջին կէտը յառաջ մղելով, Օսմանեան պետութիւնը որչափ հնար է կատարեալ աշխարհականացման նպատակով վրայ դնէ» (էջ 16)։ — Փա՛ռք քեզ Աստուած. այս էր բոն-

լիքը եւ այս ըսելու համար այդքան մանուածապատ երկարարանութիւն կ'ուզէր... Ի՞նչ ըսել է աշխարհականացում... Կրօնքներու ջնջում ըսել է. որովհետեւ այդ աշխարհականացմամբ «իմքնին պիտի իյնան բաժանման միջնորմները (կրօնքներն), որոնք այժմ իրարու դիմաց զսնուող ազգութիւնները իրարմէ կը զատեն»։ Ա'լ ուրեմն կարեւոր չեն կրօնքներն, անոնք իրենց գործը տեսած են. «վասն զի եթէ կրօնքը մինչեւ հիմայ իրենց (ազգերու) տեսականութիւնը ապահովեց, միեւնոյն ասեմ ալ գիրենք իրարու ներհակ զսնուելու բարոյապէս օգնեց։ Բարենորոգմանց ընդհանուր շարժում մը միայն կրնայ այդ նպատակին հասցընել»։ Ասոր ալ համեմատ առաջին պայմանն է... հոգիները կանխապատրաստել դպրոցներով եւ ազատութեան գործնական վարժութեամբ... Այդ պատրաստական գործին հետեւում է անշուշտ Օրմանեանի գիրքը, որն որ ազգերու աշխարհականացման ջատագովի համար «օգտակարագոյն հրատարակութիւն» մ'է։ Ըսել է Օրմանեանի «ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻ» հոյակապ (?) գիրքը՝ նոյնինքն զՀայոց Եկեղեցին ու կրօնքը իրրեւ բաժանման միջնորմ քանդելու եւ ջնջելու հետեւող գործում է. ահա մեր ալ ըսածը եւ յայտ կը համաձայնինք Պր. Bareillesի։ Սակայն չենք կրնար հաւանիլ անոր թէ «միայն այդ կերպով կրնան զանազան ազգութիւններ իրարու հետ միանալ»։ Նուազ եւս կը հաւանինք՝ թէ այդ կերպով միայն կարելի ըլլայ «հաստատուն միաւորութիւն մը կազմել», անկրօնութեան տանող սկզբունքներն ըստ ինքեան բաժանիչ ու տարբարութիւն են եւ չեն կրնար միութիւն զանգել եւ ո'չ կրնան «ամենուն հասարակ եղող հայրենիք մեծութեան եւ բարօրութեան հասցնել»։ — Օրմանեանի նպատակաւոր գրքին՝ հաւատարիմ ջատագով, որ նոյնին Յառաջարանն ընկելով, կ'ամփոփէ անոր բովանդակութեան գլխաւոր գծերն եւ երեւան կը հանէ այսպէս անոր մէջէն եկեղեցամարտ ու կրօնամարտ ծրագիր մը՝ պատրաստուած ի մեզս միշտ միամիտ Հայուն։

(Շարունակելի)

ԽԱԶ

Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Շեկ ընդունելութիւն Հօգաւորի պալատան մէջ.— Կարդ. Նալկի
հուսած խնջոյքը. — Քահանայապետական ժնարհներ.— Ս.
Հաղորդութեան հանդիսաւոր քափօրը:

Հօգաւորի կայսերական պալատան մէջ հանդիսաւոր ընդունելու-
թիւն մը կատարուեցաւ Սեպտ. 14ի իրիկունը՝ ի պատիւ Համաժողովի
ներկայ գտնուողներուն:

Ներկայ էին Վեհ. Կայսրը, բոլոր Արհիդուքսերն ու Արհիդքսուհի-
ները, Կարդինալները, Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսները, նախա-
րարները, պալատան ու պետութեան բարձր պաշտօնատարները. Վիեն-
նայի ամբողջ աղետալակտական դամն ու անթիւ քաղմութիւն մը հրա-
ւիրեալներու:

Հոն համախմբուած էին այսպէս շուրջ 3000 անձեր:

Տիկիներն իրենց ամէնէն ճոխ արդուզարդերը կը կրէին:

Հոն ներկայ էր նաեւ Կոմս Պէրխթօլտ իր տիկնոջ հետ միասին:

Մասնաւոր խանդավառութեան առարկայ եղաւ ամէնուն կողմէ
Կարդինալ Վան Ռօսսուօ Առաքելական Պատուիրակը: Կայսրը կրկին ու
կրկին անգամներ շնորհաւորեց զանի Համաժողովին իրաւունքն յաջողու-
թեանը համար, որ յաջողութիւնն անշուշտ մեծ մասամբ արդիւնքն էր
իր անձնական անստղիւտ ձիրքերուն: Նմանապէս ջերմ շնորհաւորու-
թիւններու արժանի եղան Կարդինալ Ամէթ, Մէրսիէ ու Քօփ, եւ Վա-
լէնսիայի Արքեպիսկոպոս Մօսէնէէօր Կուրծագօլա ի Մէնէնտէզ:

Հանրութեան ուշադրութեան առարկայ եղան նաեւ Մօնս. Մար-
ձօլինի, Մարինի եւ Լէկա-իշխանունի Ալտօպրանտինի, իշխան Տօն Լուճի
Լանչէլլօթի, մարքիզ Սէրլուրի Քրէշէնձի, կոմս Ճէնթիլօնի եւ կոմս
Քիասսի:

Հռովմէական Յանձնախումբը եւ Անարատ Յղութեան Գլխաւի ներ-
կայացուցիչներն էին Հ. Տօգ. Կոստ. իշխան Հօնէնլօնէ. Մօնս. Անճէլլի
եւ Ասպետ Ռիչչի: Միլանի Յանձնախումբին ներկայացուցիչն էր Կանո-
նիկոս Սօլտինի:

Իսկ Հայ-Կաթողիկէ Հասարակութեանն ու Նուիրապետութեան ներ-
կայացուցիչներն էին Արհ. Արհ. Գոյունեան եւ Իսրայէլեան եպիսկո-
պոսները:

Կայսրն ամէն Կարգինալներուն ու Նախկողոսներուն հետ եւս խօսակցեցաւ, եւ ամէնուն ալ ունեցաւ մէյմէկ ազնիւ խօսք ուղղելու:

Նմանապէս դահաժառանգ արհիդուքս Փրանկիսկոս Ֆէրտինանտ եւս առանձինն առանձինն խօսակցեցաւ բոլոր Կարգինալներուն եւ Նախկողոսներուն հետ: ամէնուն պատշաճ խօսք մ'ունենալով իր լեզուն վրայ: Ի մասնաւորի երկարօրէն տեսակցեցաւ Առաքելական Պատուիրակին հետ՝ որու համար իր ծայր աստիճան խանդավառած ըլլալը անձամբ խոստովանեցաւ:

Դահլիճը՝ ինքնին արդէն յոյժ փառաւոր, սոյնքան շքեղօրէն լուսազարդուած էր՝ որ աննկարագրելիօրէն հիանալի տեսարան մը կը պարզէր:

Ընդունելութիւնը տեւեց մինչեւ ժամը 10: Բայց Կայսրն ու պալատականները քաշուեցան իրենց յատուկ յարկաբաժինները ժամը ճիշդ 9ին:

Վիեննայի արքեպիսկոպոս Կարդինալ Նակլի տուած հացկերոյթն ալ՝ ի պատիւ Առաքելական Պատուիրակին ոչ նուազ շքեղ եղաւ:

Արքեպիսկոպոսական պալատը զարդարուած էր՝ պարագային համաձայն, տունկերով ու ծաղիկներով: Սոյն հացկերոյթին կը մասնակցէին Կարդինալ Վան Ռոսսոմ իմ պատուակալ Ասպետ Կոմս Կզէրնիմի հետ, ինչպէս նաեւ Ն. Վ. բոլոր հետեւորդ բարձրաստիճան եկեղեցականներով, իշխաններով եւ ազնուականներով:

Աղանդերի պահուն Կարդինալ Նակլ բաժակ պարպեց Ս. Քահանայապետին ու Կայսեր կենաց: Խիտ մտերմալից եղաւ հացկերոյթը: Սեղանէն վերջ, Կարդինալ Նակլ՝ իր բոլոր հիւրերով միասին ուղղուեցաւ դէպ ի Ձմեռնային Պարսեզ դոր ինք յատկապէս շինել տուած է: Հոն հաւաքուած էին Թրիէստէի մէջ գտնուած Սալէզեան հաստատութեան երաժշտական խումբը 70 երիտասարդներէ բաղկացած, որոնք ընտիր կտորներ նուազելով հացկերոյթի պահուն, ամէնուն գովեստին արժանացած էին:

Կարդինալ Նակլ, որ մասնաւոր գուրգուրանք մը կը տածէ Թրիէստէ քաղաքի մասին, պահ մը կանգ առնելով խօսակցեցաւ աշխոյժ եւ ուշիմ երիտասարդներուն հետ. ու զանազան կտորներ եւս զարնել տուաւ հոն:

Հոս մեր պատմութիւնը աւելի չերկարելու համար համառօտակի յիշելով Քահանայապետին կողմէ շնորհուած պատուանշանները՝ զարս Պատուիրակը յանձնեց անձամբ իրենց տէրերուն, փութով անցնինք Հաղորդութեան փառաւոր թափօրին նկարագրականին՝ ճիշդ ինչպէս օրը օրին հեռագիրք աւետեցին Կաթողիկէ աշխարհի:

Ս. Քահանայապետին՝ առթիւ Վիեննայի Համաժողովի շնորհած պատուանշաններն էին:

1. — ՊԻՍՍԵՍՆ ԿԱՐԳԻ ՄԵՐ ԽԱՉԸ, որ տրուեցաւ իշխան տի

Մօնիթէնումօրի, Ն. Առաքելական Կայսեր արարողագիտին, եւ Ոսկե-
գեղմի կարգի Առդեա՝ կռն Կզէրնիմի:

2. — Ս. ԳՐԻԳՐ ՄԵՄԻ ԿԱՐԳԻ ՄԵՄ ԽԱԶԸ, որու արժանացած
էին կռն Գօլծնիէվսքի. իշխան Շէճնպուրկ, եւ հանրային կրթութեանց
ու կրօնից հախարար Տօլթ. Հուսարէք:

3. — Ս. ՍԻԼՎԷՍՏՐՈՍԻ ԿԱՐԳԻՆ ՄԵՄ ԽԱԶԸ, որ շնորհուեցաւ
Վիեննայի քաղաքապետ Տօլթ. Նայմայէրի, եւ ոծտիկանական վարչու-
թեան հախարար Առպետ Պրնէզովսքի:

4. — Ս. ԳՐԻԳՐ ՄԵՄԻ ԿԱՐԳԻՆ ՀՐԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ՝
իշխան Լիխթընշթայնի:

5. — Ս. ՍԻԼՎԷՍՏՐՈՍԻ ԿԱՐԳԻՆ ՀՐԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ՝
Վիեննայի գեր-քաղաքապետ Քօրտարէրի:

(Շարունակելի)

ԱՐԴԻՆՈՅ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵՆԷՆ

Ս Ծ Գ Գ Ո Ւ Ս Գ

Կ'ընդունի՞նք հետեւեալ համակը.

Գ Ե Ր Ա Պ Ա Յ Ծ Ա Ռ Տ Է Ր

ՏԷՐ ԳԼԵՄ Գ Ծ. ՎԱՐԳ, ԹԵՂԵՂԱՊԱՇՏԱՆ

Տնօրէն եմբագրապետ « Կարօյիկ Արձագանգ »-ի

Դեր. Տիր

Եթէ կարելի է շնորհ ընէիք հետեւեալ յօդուածն ղեկել. Պատուական Շաքարա-
քեթիլ մէկ էջին մէջ:

Մամ հաւաստօք յարգանաց Գերապաժառ Տնառնդ

Խ. Ծ. Յ. Վ. ԱՐՈՒՄԱՆԵԱՆ

Ի Բերա, Կ. Պոլս 1912 Հոկտ. 30

Այո տարի Հոտիմէական Ս. Եկեղեցւոյ հարազատ զաւակունք,
Աստուածաբան Հայրապետք, բարեպաշտ Թաղաւորազունք, իշխանք
եւ հաւատացեալք եւ աթինայք, ի նշան իրենց կենդանի հաւատքին եւ
աստուածասէր հոգւոյն կարծես թէ մրցման յասպարէզն եղած փութա-
ցին ճեպեցին հարիւր հազարներով աշխարհի հեռաւոր ամէն անկիւննե-
րէն ի մայրաքաղաքն Վիեննայ, Սեպտ. 12-15ին, Ամենասուրբ Հաղոր-
դութեան գերապանծ Ժողովքի եւ հանդէսներուն մասնակցելու համար:
Ո՛ւր ստուգիւ անպատմելի եւ աներեւակայելի հանդէսներ մէկ մէկու

յաջորդեցին . Կոստանեակ հաղար մատաղերամ մանկոյի շուշաններու պէս սպիտակ հագած եւ բազմաթիւ բարձրատիճան բարեպաշտ իշխանք եւ իշխանուհիք Քերովբէից սիրով վառեալ մերձեցան սրբազնասուրբ Խորհրդոյ Հաղորդութեան . մանաւանդ այդ դարուց ի դարս անմոռաց եւ գեր ի վերոյ հանդէսներուն . անպատմելի փայլ մը տուաւ Վեհափառ Կայսրն Փրանսուա Ժօզէֆ , երբ ինքն եւ իւր համայն արքայազուն գերդաստանօքն հաղորդուեցաւ ի մեծ շինութիւն բովանդակ քրիստոնէայ ազգին : Եւ ահա այդ մեծ հանդէսին մէկ փոքրիկ շառաւիղն ալ բարեպատիւ զուգադիպութեամբ մը միեւնոյն Սեպտ . 15ին կը նշմարուի Ռուսաստանի Արդուին քաղաքին մէջ , ուր եւս մեծ շքեղութեամբ ու պանծալի հանդիսիւ տեղի կ'ունենայ Հայ-Կաթողիկէից գլխաւոր առաքելոց նուիրուած Մայր Եկեղեցւոյն 1837-1912ին հիմնարկութեան եւ օծման 75 ամեայ Յորեկանը : Ծիշդ այդ օրը այն տեղ կը սկսին եկեղեցական վեհ արարողութեանց եւ ժողովրդական տօնախմբութեան հանդէսներն ամբողջ տեղւոյն հասարակութեան խանդավառութեամբ : Բազմաթիւ հեռագիրներ եւ շնորհաւորական ուղերձներ կը տեղան Ռուսաստանի այլեւայլ տեղեր գտնուող Հայ-Կաթողիկէներէն եւ համաստ գումար մը կը նուիրուի օտարութեան մէջ եղող Արդուինցիներէն , Յոբելեանի յիշատակը անմահացնելու համար Ս . Պետրոս եւ Պօլոս գլխաւոր Առաքելոց արձանները կանգնելու յատուկ արձանադրութեամբ ի ճակատ դրան նոյն եկեղեցւոյ :

Առջի օր՝ երբ մէկ կողմէն հանդիսաւոր Պատարագի զանգակներն կը զօղանչէին , բարեպաշտ ժողովուրդք երաժ երաժ կը դիմէին զեւ ի յԱռաքելոց Տաճարն , Մայր Եկեղեցին փառաւորապէս զարդարուած լուսազարդուած էր . զպրաց դասն արդէն սկսած էր իւր քաղցր ու մեղաժողով մեղեդին երգել . եւ ահա զինի Աւետարանին , Պատարագին Գեր . Կարապետ Վ . Դիրբուկեան Առաջնորդն տեղւոյն , նախ հոգևով եռացած՝ կը բացատրէ օրուայ հանդիսի վեհութիւնը , միանգամայն ի լուր համայն ժողովրդեան կը կարգայ Սրբազան Քահանայապետէն լիակատար ներդրութիւն շնորհին աւետող Կոնգակը զոր ստացեր էր Ռուսիոյ Հայ Կաթողիկէից ընդհանուր առաքելական վարիչ Սարգիս Գերադայճառ Տէր , Աբրահամեանին միջոցաւ . ապա ազգու եւ իմաստալից քարոզ մը կը խօսի Ամենասուրբ Հաղորդութեան վրայ , որ արդէն կանխաւ երեք օրից դրուած էր ի բազմոցի յայցելութիւն հաւատացելոց :

Եւ այսպէս երեք օրն ալ հանդիսաւոր պատարագներ կը մատուցուին առաւօտ եւ երեկոյան հոգեցունց եւ ազգու քարոզներ կը տրուին Ս . Հաղորդութեան վրայ , որով հազարաւոր հոգիք , արք եւ կանայք , ծերք եւ երիտասարդք , բոբբութեն հաւատքով հրահրած բոցավառ սիրով եւ յուզիչ ջերմեռանդութեամբ կը դիմեն յատեան Խոստովանութեան եւ կը

մերձեանս Ամենաուրբ Հաղորդութեան : Երեք օրն ալ մասնակի Ս . Հաղորդութեան թափօշներ կ'ընեն եւ օշնութիւն կուտան . իսկ վերջի օրը Սեպտ . 17ին , Հաղորդութեան մեծ թափօշը կը սկսի , այս է հրապարակելը : Միւս թաղական երեք եկեղեցւոյ քահանայք եւ զպիրք հարիւրաւոր երկուս աշակերտք եւ անթիւ բաղմութիւն ժողովրդեան (պէտք է գիտնալ որ Արշինոյ տիրող մասը Հայ-Կաթողիկէ է . ունի մէջը 6000 հոգի Հայ-Կաթողիկէ , չորս հոյակապ եկեղեցի , 10ի չափ քահանայ) հանդիսաւոր թափօրիւ ընդ յառաջ կ'ելլեն Ամենաուրբ Հաղորդութեան : Մայր եկեղեցւոյ հանդիսաւոր վեհ թափօրն ալ թաղական եկեղեցիներէ թափօրին հետ միանալով՝ չքնաղ եւ հոգեզմայլ տեսարան մը կը ձեւացնեն եւ կը սկսին ծանր քայլերով չքման կատարել եկեղեցւոյ շուրջը երգելով Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի... : Յնձա՛ այսօր Սուրբ Եկեղեցի Աստուծոյ... եւ Զեք Աստուծ յովարանական երգը : Այդ պահուն չորս եկեղեցւոյ զանգակներն միանգամայն իրենց խորհրդաւոր թնդիւնով կը հնչէին , բովանդակ քաղաքը կը զրդի , բոլոր այլադաւան ազգերը փողոցները պատշգամբներուն ու պատուհաններուն առջեւը լեցուած մեծաւ հիացմամբ կը դիտէին Հայ-Կաթողիկէ հասարակութեան ըրած ջերմագին յարգանքներն հանդէպ Սուրբ Հաղորդութեան եւ գլխաւոր Առաքելոց : Ո՛հ որչափ մխիթարական էր տեսնել որ ծունկի վրայ եկած թափօրին կը հետեւէին : Գլխաւոր Առաքելոց պատկերներն ալ դափնեայ պսակներով զարդարուած առանձինն առանձինն ի չորեցունց բարձեալ կը հետեւէր թափօրին : Նոյն չքեղ հանդիսիւ եկեղեցի կը մտնեն . ժողովուրդը կը ծովանայ եկեղեցւոյ մէջ եւ բոլորովին հիասթափուած վառս կը մատուցանէ Երկնաւոր Թագաւորին . միեւնոյն ժամանակ զարձեալ Սուրբ Հաղորդութեան վրայ սրտաշարժ եւ հոգեբուխ քաղով մը կը տրուի եւ ապա Օրշնութիւն Սուրբ Հաղորդութեան եւ այսպէս վախճան կը տրուի հանդիսաւոր տօնախմբութեան :

Բայ ի ասկէ այդ երեք օրերը տօնական օրերու պէս ուրախութիւններ կը կատարուին եւ ամբողջ քաղաքը կրակավառութիւններ կ'ըլլայ , օղապարիկներ յօդս կը սաւառնին , ձօներ եւ ճառեր կը կարդացուին Առաջնորդարանին մէջ . մեծ գովեստներ եւ դրուատիք կը շոյլլեն իրենց քաջ եւ ժիւր հովուին , խմաստուն եւ բաղմարդիւն Առաջնորդին Գեր . Կարապետ Վ . Տիրուկեանին , որ երբէք Արդւնոյ մէջ չտեսնուած բաներ յառաջ բերած էր իր գործունէութեամբ եւ խոհեմութեամբ :

Ուրեմն եւ ես իմ կողմանէս իբր հայրենակից ի հեռաւոր զգացուած անկեղծ հոգւով կը շնորհաւորեմ այդ Դժամեայ Յորեկանը եւ կը մաղթեմ համայն Աստուածապաշտ Արդւնոյ ժողովրդեան , գեր . գեր . դասուքահանայից եւ գեր . Առաջնորդ Տիրուկեանին առաւել եւս պայծառ եւ երջանիկ տարբեր արդիւնաւոր օրերով եւ այլ այդպիսի յորեկաններ կատարելու բաղաւորութիւն :

Յ . Վ . ՍԱՐՈՒԽՍԵԱՆ

ԱՆԱԶԱՌ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դուք ոչինչ գիտեք, եւ ոչ բնաւ խորհեջ իսկ. քե-
շաւ եւ մեզ զի այր մի մեռանիցի ի վերայ ժո-
ղովոյդեան եւ մի անեանայն ազգս կոտորեք :

ՅՈՒՂ. ԺԱ. 49-50

Եթէ առողջ միտք ունեցողին մէկն՝ ըրջօրէն իւր աչքն դարձնէ յետին անցած քառասունամեայ շրջանին եւ մասնաւորապէս Հ. Կ. ազգային վիճակին անաշառ զննու-
թեամբ ակնարկ մի ձգէ, ինչ կը տեսնայ արդեօք, եւ ինչ զաղափար կ'ունենայ հայ ազգին նկատմամբ, հարկ չկայ երկար պատմելու, օտար երկիր փախստական ապաւի-
նող, Լիբանանու լեռան սարն գիմող եւ ճերմակ ամպոց մէջ Զմառու կերտող ծերունի Արրահամէն մինչեւ նոյն առանձնութեան սրբավայրին մէջ հոգին աւանդող՝ հրաշա-
լան եւ զարմաքանչ վարք ունեցող Գրիգոր Աստուածընտիր կաթողիկոսն: Երբ Ամե-
նակալին լիագոր ձեռքն միայն էր գործող եւ տնօրինող. երբ յանձնունչս բարեխօսող Աստուածային հոգին միակ հրամայող եւ առաջնորդող էր, թէեւ ահաւելի չլսուած հայածանաց ենթակայ, թէեւ անտանելի շարչարանաց տակալի նեղութեանց մէջ. ինչէ՞ր չբարեգործուեցան, որչափ յառաջագիմութիւն. որպիսի զարգացումն ինչ զար-
մանալի աճումն, քանի՞ քանի՞ նոր թեմերու աւելումն եւ բացումն: Բայց երբ մարդն
Աստուծոյ գործոց միջամտել եւ իւր սահմանափակ դադափարովն կարգադրութիւններ տնօրինել սկսաւ՝ «եւր գլուխն ստից խոնարհեցաւ» ինչէ՞ր չտեսնուեցան. ներքին խռ-
վութիւնք անընդհատ. սրբապղծութիւնք անպակաս սուրբ ստացուածոց յափշտա-
կութիւնք անհամար կալուածոց ծախումն անթիւ եւ անիրաւութիւնք անհաշիւ,
ժամանակակիցներն գեռ կենդանի են աննցմէ հարցուցէ՛ք. Մարտինու աղքատաց
արկղին մինակ հազարաւոր ոսկիներ փաս հասաւ, ո՛ւր շնորհիւ Աստուծոյ անդիհա-
սունեան միմիայն Գրիգոր վարդապետէն ի զատ չկար: Լիբանանու մէջ դեռ մինչեւ
հիմայ հայկական յիշատակներ կրող հսկայակապ Գրեմ վանք, ե՞րբ ծախուեցաւ, քա-
նիքով, որմէ՞ եւ ինչո՞ւ. Գող ո՛չ մտանէ եթէ ոչ չի գողացի. եթէ բարի էին եւ մա-
քուր դիտաւորութեամբ կը գործէին. ինչո՞ւ սապէս տխուր յիշատակներ ձգեցին իրենց
ետեւ. նոցա ի նախատինս եւ Հ. Կ. ազգին ի թշուառութիւն. Ծառ ի պողոյ իւրմէ
ճանաչի. Գեռ մինչեւ երէկ Զմառու վանքն պարտուց ծանր բեռան տակ կը հեծէր, եւ
նոր Աղեքսանդրեան Անդրէաս գերապայծառին շնորհիւ սոյն անտանելի շաղակէն թե-
թեւցած սկսաւ դարգանալ. մնացած թեմերն սոյն աւերներէն գերծ չմնացին. Հ. Կ.
հասարակութեան պատիւ չբերող նոյն երկպառակութիւնը կը շարունակուէր եւ հա-
զիւ հազ սահմանադրութեան շնորհիւ սկսանք մեր խեղճութիւնն զգալ եւ զարման
տանել, հոգալ, ահա թերդեան եւ հակաթերդեան վեճն մէջտեղ նետուեցաւ ի յետա-
ձգութիւն հաւատքիս եւ Հ. Կ. հասարակութեան:

Հրաշալի եւ եզական, երեք անգամ կենդանի ձայնով ընտրուած Թերդեանն, կա-
թողիկէ եւ լուսաւորչական Հայոցմէ առ հասարակ պաշտելի անձն. իւր տղայու-
թեան միշտ սիրելի, իւր նորընծայութեան հանապաղ գովելի, իւր քահանայութեան

շարունակ պատուելի, և իւր եպիսկոպոսութեան անդադար ներդրելի, անմահ փառաց կոթողն եղած Թերզեան, վաթսուն տարի անբացառիկ անրիժ անադարտ անցնելէն վերջ, ընդդէմ վճռոյն Ննչպէս կ'ապրիք այնպէս կը մեռնիք, — այսօր յանկարծ փոխուեցաւ, այլեւս նոյն երկրպագելի Թերզեան չէ, հապաւ ելուզակ, յափշտակիչ, մատնիչ, ազգատեաց է դարձեր. «Որ գովէ և պարտաւէ կրկին ստէ», ինչ զարմանալի փոփոխութիւն. Վասն որոյ բարի դործոյ կամիք զիս քարկոծ առնել: Արդեօք ինչ է այս ծայրայեղ այլալուծեան սկզբնապատճառ: Երէկ իւր անմահ վարդապետին նման օդ ցնդող ովսաննաներով տաճար մտաւ. այսօր սոյն անսխալ վարդապետին յար և նման կ'ուզեն ի խաչ հանել. եթէ կը ներուի ինծի ես կը պարզարանեմ զայն. և ինծի պէս միակ անտարբեր ականատես մը կրնայ ճշտովին պատճառները գիտնալ և արդար դատ վարել:

Եթէ մարդկութիւնն նկատուամի համար լռէ, քարութիւնն պիտի հաստատէ թէ Թերզեան ուղիղ ճշմարիտ սկզբունքի տէր է և բոլոր գործքերն սոյն անսխալ սկզբունքն յառաջ եկած ըլլալով գովուած են և գովուին նոյն իսկ հակառակորդներէն. իւր բոլոր մեծ և փոքր շարժմանց պատճառն և վախճան Աստուծոյ սէրն եղած է. և սոյն սիրոյ այնպէս ազատ գերի դարձած է որ այլեւս չկրնար ո'ր իցէ փառք և պատիւ կամ անարգանք և պարտաւանք անկէ ետ կ'ստեղծել: Մեր հայ եղբայրներ, կրօնք և ազգ, Աստուածսիրութիւն և ազգասիրութիւն իրարմէ չորոշելով բոլորովին խառնուած են և կ'ուզեն իրենց գաղափարով միացնել և աւելի ևս, առաջինը երկրորդի զոհել, բան մը որ մտաց դէմ է. ոսկին արծաթի հետ փոխել. երկուսը երկրաւորի, զԱստուած ազգին հետ. ուստի անոնց քով ամէն ինչ մէկ է, ամէն ինչ մարդկային, ամէն ինչ հնարաւոր. անոր համար սաստիկ վշտացան երբ Թերզեան Իզմիրլեանին հոգեհանգստեան չգնաց և ոչ իւր տեղ մարդ զրկեց, զոր՝ ըստ որում հոգեւոր պաշտամունք, Թերզեան չէր կրնար ընել: Ահա առաջին պատճառն. նոյն ժամայն Հայերը սկսան ծուռ աչքով Թերզեանին նայիլ և անուղակի վարկաբեկել. սոյն ատեն Հայոց կարողներէն մին է. Պայսէն Բաղէշ գալով ինծի ըսաւ. Մենք Թերզեան ազգաւոր կը կարծէինք. Իզմիրլեանին հոգեհանգստեան չգալն իրեն ծանր պիտի նստի: միթէ կրնար մի Աստուածասէր անձն ի կրօնս կեղծիք ընել և անտարբեր գտնուիլ:

Երբ Քրիստոս Աստուածաբար աւանդին մտաւ և իւր հօր տան մէջ պղծութիւն տեսաւ, սուրբ նախանձով վառուած — «Նախանձ տան քո եկեր զիս» — խարազան ձեռքն առած զամենքն դուրս քշեց, աղաւնիավաճառներու սեղաններ տապալեց և յաղաղակեց. «Տուն իմ տան աղօթից կոչեցի և դուք արարեք զզաւրս աւազակաց». նոյնպէս Թերզեան երբ իւր Աստուածը տիր գլուխ առաջնորդ և հովիւ ազգին, Հայ Կաթողիկէ տաճարն մտաւ չէր կրնար անոր մէջ անկարգութիւն տեսնել և լռել. չէր կրնար անտարբեր աչքով զեկեղեցի աշխարհականացնող ծրագրի նայիլ և անտեսել. ուստի Աստուածային նախանձով զինուած մերժեց ընդդէմ հաւատոյ պարտաստած կանոնները. և տապալեց զայն կերտողներուն գաղափարական սեղանները: Ահա Թերզեանին երկրորդ մահուչափ ըստ աշխարհի մեղքն, որուն համար ժողովեցան իշխանք և ժողովք խորհրդի մանելու. և իրենց զլխին ծար հագաւու. «Եթէ թողու՞մք զնա, այնպէս ամենքեան հաւատան ի նա և զայցեն Հոռոմք և բառնայցեն զազգ մեր և զսեղիս»: Եթէ հաւատք՝ հաւատք են, զայն կարգադրել խորհելն անգամ անտեղի է. եթէ աշխարհային պայման, այլ՝ Հաւատք գերբնական և Աստուածային են. առ Աստուած տանող և անոր հետ միաբանող. հիմնադիրն ուրեմն Աստուածագէտ ըլլալու է. Աս-

տուած լինելու է: Կարելի՞ է գաղիերէնի անունն անգամ չլսող՝ գաղիերէն ուսուցիչ ըլլայ: Կրնա՞յ մի իւր գիւղին սահմանափակ շրջանէն դուրս չելլող զիւղացիներն անհարց անառաջնորդ Ամերիկան երթայ և ուրիշներ ալ հետը տանի: Հապա ինչպէ՞ս կը յաւակնի աշխարհական կարգն կարգ և կանոն դնել քրիստոսապրէն ի գաւա, ըսէք ինծի քիչ մը, ո՞ր մէկն երկինքն չուած գնացած է որ կարենայ ուրիշներուն ճամբայ ցուցընել: Կամ ո՞վ եկած է Աստուծոյ քովէն որ անոր խորին Խորհուրդները և բացարձակ կամքն մեզի յայտ առնէ: Կամ որուն Աստուած ինքզինքն յայտնած և հրամայած է մեզի առաջնորդ ըլլալու: Սիրելիք ի Քրիստոս, գունաւոր ակնոցները մէկդի՛ք՝ դնելով ներքին տատուածադատ խղճմանքով դատ տեսէք և վճիռ տուէ՛ք: առողջ միտք ունեցողն թող դատէ: ասկէ դատ միթէ՞՝ հին անկարգ ծրագիրն մերժեց անկարգ մնալու և գործելու համար ըրաւ, բացարձակապէս ո՛չ: այլ ընդհակառակն հաւատոյ սկզբունց համաձայն կրօնից յարմար կատարեալ մնայուն կանոններ յարգարելու և ամենուն միանգամ ընդ միշտ գործունէիաց կացուցանելու համար է: Ինչո՞ւ ուրեմն այնչափ զրոյցք և խռովութիւնք: ՆԵՐՍԷՍ Վ. ԶՐԵԱՆ Հ. Կ. Ժ. Ի Բաղէ

(Շարունակելի)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Գոյնիւոյ արքեպիսկոպոս և կարգ. Ֆիշէրի յաջորդ կարգուեցաւ Արհի. Ֆօն Հարթման, որ հազիւ թէ տարի մը առաջ նոյն Ֆիշէրէն եպ. օծուած էր Վէսթֆալիոյ Միւնսթէր քաղաքին: Արհի. Հարթման ծնած է ի 1851 և քահանայ ձեռնադրուած ի 1874: ապա երթալով ի Հռոմ, աստուածաբանական ուսմունքը աւարտած է և Տօգորայի աստիճանաւ պատկուած: Հռոմէն ստացաւ Ս. Քահանայապետին և Առաքելական Ս. Աթոռոյ հանդէպ ամենախորին սէր և մեծարանք, յարգալից հպատակութիւն և անյողոցող յարուս: Միւնսթէրի մէջ հանգ. Տիեկէլթատ եպ.ին դիւանապետ, խորհրդական և փոխանորդ եղաւ: և Գերմանիոյ Վիլհելմ կայսր 1914ին շնորհած էր իրեն Կարմիր-Արծիւ պատուանշանը: Արհի. Ֆօն Հարթման էր որ Միւնսթերի մէջ տարի մը առաջ իր հրատարակած եպիսկոպոսական անդամիկ Կոնգակին մէջ, ակնորկելով Արդիականադատաւորոց Քահանայապետական իշխանութեան գէժ տածած կիսկատար և կեղծաւոր հպատակութեան զգացումներուն, առանց այլեւայլի յայտարարած էր անբաժան յարում եւ բացարձակ հնազանդութիւն այն ամէն բանի մէջ զոր Ս. Աթոռը պահանջէր իրմէն, և յարգանք առ կայսրն: Չարամիտներն ըստ քմաց մեկնութիւններ տուած էին այս ուղղափառ յայտարարութեան: Իսկ նա գործով ալ ապացուց իր անկեղծութիւնը: Հիմա Գոյնիւոյ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող Աթոռոյն վրայ ճշմարտապէս Կաթողիկէ ուղղութիւն պիտի տայ, գոտացնելով և արմատախիչ ընելով եկամուտ անտարբերութեան որոմները:

••• Հանգ. կարգ. Գուլիէի նախաձեռնութեամբ պղտիկ տղայոց ալլեւալլ ընկերութիւններ կային հաստատուած, որոնց ի մի ձուլումը կը փափաքէր այն առաքելական հովիւը: Այս ձուլումը կատարուեցաւ կարգինալին յուզարկաւորութեան նախորեակին, ընդ անուամբ «Ընդհանուր Ընկերութիւն Կաթողիկէ Մանկանց»:

սուտի գործը որ կ'ըսէր. «Թո՛ղ տուի՛ք որ պզտիկ տղայի զան ինծի»։ Այս ընկերութիւնը համաշխարհային բնոյթն ունի. ան պիտի բլլայ կեդրոնը, Հիանալի առաքելութիւն, խմբելու համար մանկութիւնը Քրիստոսի քով։ Կ'արժէ ամէն աշխատութիւն և զոհողութիւն, ճշմարիտ Կաթողիկէ պատանիներ հասցնելու համար։

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Պատերազմը դեռ չաւարտեցաւ, հակառակ մեծամեծ ակնկալութեանց, զորո հաշտութեան կամ գոնէ զինադադարի ձայները կուտային՝ շատոնց մտահոգութեան մոտնուած ժողովրդեան մտքերը հանդարտեցնելու համար՝ Սաչափ կայ որ Չաթալ-ճալի ամբուլթիւններուն առջեւ մղուած բազմօրեայ ահաւոր ճակատամարտը՝ թուրք զօրաց անպարտելի պաշտպանութիւնը և անվիհեր քաջութիւնը ցոյց տուաւ։ Հոն պատերազմին վերջին բախտը փորձելու համար նախճիրներ գործուեցան. պուլկար բանակը սոսկալի կորուսաներու մատնուեցաւ, մանաւանդ Մարմարայէն ու Սեւ ծովէն Օսմ. տորմիզին անգաղար ոմարկոնումով։

*, Էտիրնէ, Եքսորա և Մանասթըր մինչեւ հիմայ փառաւոր անձնապաշտպանութեամբ շարունակեցին եւ թշնամին չկրցաւ զանոնք դրաւել։

*, Իթթիհասականներէն հետզհետէ ձերբակալուեցան և դատուելով ալլեւալ պատիժներու դատապարտուեցան։ Իրենց վրայ կը ծանրանայ քէտիւտ յանցանք կառավարութեան ձեւը փոխելու համար դաւաճանութիւն մը պատրաստած բլլալու։

*, Տէրութեանց մարտանաւերը ալլեւալլ միջոցներ ձեռք առին Կ. Պոլսոյ պաշտպանութեան համար։ Ամէնքն ալ քաղաքին զանազան կէտերուն վրայ զօրքեր հանեցին խորտակեցներով (միքայլետոզ)։ այս զօրքերը տեղաւորուեցան դեսպանատուններու, օտար հաստատութեանց, եկեղեցեաց, հիւանդանոցներու և զարդներու մէջ, ի հարկին դուրս ելլելու և գործնական պաշտպանութիւնը կատարելու համար զէն ի ձեռին։ Սակայն կառավարութեան ձեռք առած ազգու միջոցներուն շնորհիւ հաստատապէս կը յուսացուի թէ ապահովութիւնը խանգարելիք ո եւ է գէպք չպիտի պատահի։

*, Երեւելի Իթթիհասականներէն ոմանք խոյս տուած են յԵւրոպա, ինչպէս նախկին ելմտական նախարար ճափա պէյ — Իսկ Թանիլի թերթին խմբագրապետ Հիւսէյին ճահիար ի Պուքարէսթ է և փորձեր բրած է նոյն թերթը հոն հանելու, բայց անոր մուտքն ի Կ. Պոլիս արգելուած է։ — Ահմէտ Րիզա ի Բարիզ է։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Տէր Կոմիտաս Քահանայ	657
Օրմանեանի «Հայոց եկեղեցի» Գիրքը	660
Ս. Հաղորդ. Համագգ. Համաժողով Ի Վիեննա	664
Յոբէլեանական տոն մը յԱրդուին	652
Անաչառ տեսութիւն	666
Տեղեկագրական	671

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԻՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Արձագանգ Շաքաքաքեթի, Բերա, Պայրամ փողոց թիւ 6 Կ. Պոլիս

Քերթիս երկրորդ օտարի աւարտի յառաջիկայ Դեկտեմբեր 31ին, ու երրորդ օտարի աւարտի 1913 Յունուար 1ին, աւելի խնամուած եւ աւելի նոյն բովանդակութեամբ:

Բաժանորդագրութեան պայմաններն անփոփոխ կը մնան. հետեւապէս կը հրաւիրենք փոփոխողները որ փութան բաժանորդ գրուիլ մինչեւ ց1 Յունուար: Իսկ անոնք որ արդէն գրուած են, իրենց պայմանաժամը չլրացած կը պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնը:

Պատեն առիթ կը ներկայանայ մեզ հրապարակաւ յայտնելու մեր խորին շնորհակալիքն ամէն այն բարեացակամ անձերու, որոնք այս տարուան շրջանին մէջ հանեցան գրաւոր թէ բերանացի թերթիս նկատմամբ իրենց դուռնաւորաց գոհունակութիւնն, խնդակցութիւնը եւ նոյնին շարունակութեան համար խրախոյս եւ մաղթանքներ յայտնել: Կը վստահացնենք զիրենք որ բնաւ պիտի չխնայուի ու եւ իցէ զոհողութիւն՝ այս գերազանցապէս լուրջ եւ հաստատ կաթողիկէ սկզբունքներու ծառայող թերթս միշտ աւելի օգտակար ընծայելու մեր սիրելի հասարակութեան: Կը խնդրուի փոխադարձաբար մէն մի նշանակաւ կաթողիկէ անհատ իւրովսանն աշխատիլ *Արձագանգի* ծառայութիւն:

Հրատարակուեցաւ «Ճարտական սկզբունք Բրիտանական Վարդապետութեան, փոքրիկ տպարան համար, հաստատեալ Հոգեւոր իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հասարակութեանն աւանդաբաններուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր աղօթքները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան լուրջ, սեղմեալ եւ պարզ ոճով շնորհիւ դպրոցականներու ամենեւնի օգտակար եւ յանձնարարելի գրքոյ մըն է անհրաժեշտ:

Դիմը անհամեմատ կերպով աժան է. ամուր քրքակազմը՝ 2 դահեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց թիւ 5:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՓԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքաց հաւար սարեկան	Դնկն. արծ.	40
Վեցամսեայ	» »	20
Արսասահման	Տարեկան Ծրանք	10
Վեցամսեայ	»	5

Քաճումնորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա Բոսով
եւ կամ մէյ. մէկ դրուոցնց նամակադրութեամբ

Մէկ թիւ 1 Դանկեկան

Նանակ, յօդուած եւն. կը ղրկուին խմբագրութեան հասցեին

ԿԱԹՈՂԻԿԵ ԱՐԶԱԿԱՆԿ

Բերս, Պայրամ փողոց թիւ 5

Կ. Պոլիս

KATOGHIGHE ARZAKANK

Péra, 5 Rue Baïram 5,

Constantinople

- ԾԱՆՈԹ.**— 1.— Արձագանց կը նրասարակուի Շաքար օրերը:
- 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ նրասարակել իրեն ղրկուած ո եւ է յօդուած:
- 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին:
- 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
- 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:
- 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:
- 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրաժեշտ երկու դանկեկանի նամակադրութեամբ ի միասին ղրկել: